

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԹԱՄԱՐԱ ՆԵԼՍԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ՝ Ժ.02.01 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
«17-ՐԴ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թամարա Նելսիկի Պողոսյանի՝ «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն» թեմայով թեկնածուական ատենախոսությունը վերաբերում է հայերենագիտության կնճռոտ հարցերից մեկին՝ վաղ աշխարհաբարի լեզվական վիճակին, որն *ընդհանուր գծերով* արտացոլվել է 17-րդ դարավերջին տպագրված աշխարհաբար առաջին գրքերում: Չնայած վերջիններիս նվիրված որոշ ուսումնասիրությունների, որոնք լույս են տեսել առայսօր, Թ. Պողոսյանի սույն աշխատանքը մի ամփոփ լեզվական քննություն է միջին գրական հայերենից նոր գրական հայերենին անցման ժամանակահատվածի մասին:

Լեզվական քննությանը նախորդում է ուսումնասիրության նյութ դարձած երեք աշխատությունների՝ բանասիրական բնույթի քննություն, որտեղ ատենախոսն ամենայն մանրամասնությամբ վեր է հանում հիշյալ գրքերի հրատարակման, նրանց հեղինակների հետ կապված հանգամանքները: Ապա նա առանձին գլուխներով տալիս է վաղ աշխարհաբարի հնչյունական, բառային և քերականական համակարգերի նկարագիրը՝ ըստ վերոհիշյալ աշխատություններում տեղ գտած լեզվական տվյալների, որոնցում, ի դեպ, ոչ թե նպատակ է հետապնդվել ըստ ամենայնի ներկայացնելու տվյալ ժամանակաշրջանի խոսակցական հայերենը, այլ այդ լեզվով շարադրելու հիշյալ գրքերում արձարծվող թեմաները:

Ասել, թե ինդրո առարկա արտենախոսության մեջ ուսումնասիրվող թեման սպառիչ լուծում է ստացել, ճիշտ չի լինի, քանի որ՝ ա) գրված լինելով տարբեր բարբառակիր հեղինակների կողմից՝ այդ գրքերի լեզուն անմիօրինակ է, բ) դրանցում, կախված նյութը շարադրող հեղինակների ստեղծագործական կարողություններից և նպատակներից, խոսակցական լեզուն գործածվել է ոչ համակողմանիորեն և ոչ ամբողջությամբ: Այսուհանդերձ, հանուն ճշմարտության պետք է նշել, որ հեղինակը

փորձել է հնարավորինս սպառիչ պատասխան տալ այն հարցերին, որոնք իր կողմից առաջ են քաշվել ատենախոսությունը շարադրելիս:

Շարադրանքից պարզ երևում է, որ ատենախոսը քաջածանոթ է գրական հայերենի պատմությանը, մասնավորապես իր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանին նվիրված բոլոր հետազոտություններին, որոնցից նա անհրաժեշտության դեպքում կատարում է շարադրանքի բովանդակության հետ առնչվող մեջբերումներ:

Աշխատանքի կառուցվածքը, շարադրանքում գործածված գիտական ոճը, արված մի շարք դիտարկումներ, ինչպես նաև հեղինակի ակադեմիական ազնվությունը վկայում են, որ ատենախոսն ի վիճակի է կատարելու բանասիրական, մասնավորապես՝ լեզվաբանական ուսումնասիրություններ:

Ատենախոսության տեսական դրույթները հիմնավորող օրինակները գերազանցապես ճիշտ են ընտրված. մի շարք հատվածներում տեղ են գտել ուսումնասիրվող նյութի մասին թվային տվյալներ և վիճակագրական աղյուսակներ, որոնցով ատենախոսը փորձել է առավել արժանահավատ դարձնել իր կողմից առաջ քաշված այս կամ այն դրույթը, հնարավորինս հիմնավորել որոշ եզրակացություններ:

Առանձնապես հաջողված են ատենախոսության այն հատվածները, որոնցում հեղինակն ուսումնասիրում է բառագիտական և ձևաբանական մակարդակներում առանձնացող վաղաշխարհաբարյան տարրերը (առաջին գլխում՝ «Բառապաշարի դասակարգումը ըստ հայերենի զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի», երկրորդ գլխում՝ «Հոլովակազմություն»):

Աշխատանքում կարևորվել է վաղ աշխարհաբարին բնորոշ լեզվական անմիօրինակությունների հաճախադեպությունը. լեզվական բոլոր մակարդակներում հանդիպում են գուցաձևություններ: Հիշյալ առանձնահատկությունը վաղ աշխարհաբարը ժառանգել է միջին հայերենից:

Ատենախոսության վերջում գետեղված երեք հավելվածներում ի մի են բերվել ուսումնասիրվող աշխատություններում գործածված ա) նորակազմությունները, բ) «չափման, կշռի, դրամական փոխառյալ» միավորները և գ) մաթեմատիկական տերմիններն ու տերմինային բառերը, որոնք կարող են հետաքրքրել ոչ միայն լեզվաբաններին:

Այսուհանդերձ, ատենախոսության մեջ տեղ են գտել ոճական [(«էդ. Աղայանն աշխարհաբար գրական լեզվի բառապաշարն ուսումնասիրելիս առանձնացնում է *մ/քանի խումբ, որոնց թվում են նաև հետևյալ խմբերը* /ընդգծումն իմն է - Գ. Խ./» (39-40)], տեխնիկական [« իսկ նոր գրական լեզվի մեջ գործածվել և գործածվում են գրական ժառանգորդությամբ (*գարնանագեղ, բազմաբեղուն* /ընդգծումն իմն է - Գ. Խ./ նն)» (էջ 40)] բնույթի սխալներ և մասնագիտական որոշ անճշտություններ, որոնք բնավ չեն նսեմացնում սույն աշխատանքի հիմնական արժանիքները:

Մասնավորապես հետաքրքիր կլինեն լսել ատենախոսի կարծիքը մեր կողմից առանձնացված հետևյալ դիտարկումներին.

1. Ատենախոսը նպատակահարմար է գտել կապակցման վերինչութային միջոցների՝ շարահարության և հնչերանգի առանձնահատկությունները «ներկայացնել նախադասության անդամների քննության ժամանակ, իսկ նախադասության հնչերանգային տիպերը՝ նախադասության դասակարգման ընթացքում» (էջ 93),. **դա** /ինչն/ ինքնին նշանակում է, որ դրանք երկուսն էլ պատշաճ խորությամբ չեն ուսումնասիրվել: Բանն այն է՝ հնչերանգը, օրինակ, չի վերաբերում միայն նախադասության հնչերանգային տեսակներին:

2. Արժեր պատճառաբանել, թե քննվող գրքերում ձայնարկություններն ու վերաբերականներն ինչո՞ւ են «հազվադեպ... գործածվում» (էջ 96):

3. Ատենախոսը *կեօրայ//գօրայ//գեօրայ* («համեմատ, համապատասխան») բառը համարում է ածական (էջ 40), մինչդեռ իրականում այն կապ է. առանց կապվող բառի չի գործածվում:

4. Ավելի նպատակահարմար կլինեն կապերն ու շաղկապներն ուսումնասիրել՝ ըստ գրական հայերենի տարբեր շերտերի: Նշելով պարսկերենից փոխառյալ *գէրա(յ)* (ատենախոսը բերում է *գէրա (յ)* ձևով) շաղկապի մասին՝ ատենախոսը, օրինակ, չի նշում, որ այն միջինհայերենյան իրողություն է (էջ 90):

5. Կարծում ենք՝ ատենախոսը կարող էր միակազմ նախադասությունների քննությունն առավել խորությամբ կատարել, քանի որ ուսումնասիրվող երկերում դրանք նկատելիորեն հաճախադեպ են և աչքի են ընկնում արտահայտության պլանի բազմազանությամբ:

6. «Համաձայնություն» ենթավերնագրի տակ բերված «... Որ քեզ՝ թագաւորիդ մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի թշնամիք են» նախադասության *որ* ենթակայի և *թշնամիք են* ստորոգյալի միջև համաձայնական կապ չկա (էջ 93):

7. Մենք համաձայն չենք ատենախոսի այն մտքին, թե ժամանակակից հայերենում «առդրությունը հատուկ է որոշիչ-որոշյալ, ստորոգյալ-պարագա կապակցություններին» (էջ 94). չէ՞ որ նշված եղանակով պարագա կարող են առնել ոչ միայն դիմավոր բայերը, այլև դերբայները, ինչպես նաև մի շարք ածականներ:

8. *Կառավարում* եզրույթը ենթադրում է ն՛ խնդրատություն, և՛ պարագաստություն, ուստի կարիք չկա մեր օրերում փորձել շրջանատության մեջ պահել *խնդրատություն (կառավարում, վարում)* ժամանակավրեպ մոտեցումը (էջ 94): Գուցե այդ է պատճառը, որ ատենախոսության մեջ չի խոսվում կառավարման անմիջական և ոչ անմիջական տեսակների մասին:

Կարևոր է արձանագրել, որ մեր կողմից նշված անճշտությունները ատենախոսության մեջ՝ ա) համակարգված բնույթ չեն կրում, բ) վերաբերում են լեզվական մասնակի իրողությունների: Այսպիսի անճշտություններից զերծ չեն սկսնակ հետազոտողների նմանատիպ աշխատությունները:

Թամարա Պողոսյանի՝ «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն» խորագիրը կրող սույն ատենախոսությունն ընդհանուր առմամբ հաջողված հետազոտական աշխատանք է: Ատենախոսը հիմնականում կյանքի է կոչել ուսումնասիրվող թեմայի հետ կապված նպատակները՝ դրա համար ի ցույց դնելով լեզվական իրողությունների և երևույթների մեջ խորանալու, սեփական կարծիքը հայտնելու և ասվածը լեզվական փաստերով հիմնավորելու կարողությունները:

Ատենախոսության բովանդակությունը և սեղմագրում ներկայացված դրույթները համապատասխանում են միմյանց, մամուլում տպագրված հոդվածներն ամբողջովին արտացոլում են ատենախոսության բոլոր գլուխների հիմնական բովանդակությունը:

Թամարա Նելսիկի Պողոսյանի՝ «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն» թեմայով թեկնածուական ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանում են «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուական ատենախոսությանն

առաջադրվող պահանջներին, ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհրդին՝ Թամարա Նելսիկի Պողոսյանին շնորհել Ժ.02.01 – «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Բանասիրական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր՝

25.02.2020թ.



Գուրգեն Կիպրոնի Խաչատրյան